

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2017թ. փետրվարի 24-ի
նիստի /արձանագրություն N 11/

1. Ի կատարումն ինստիտուտի խորհրդի նիստում արված առաջարկների՝

1.1 ինստիտուտում անձեռնմխելի ֆոնդ ստեղծելու հնարավորություններն ուսումնասիրելու և հիմնավոր նախագիծ ներկայացնելու համար ձևավորել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

1. Եղիազարյան Վահան

2. Նալբանդյան Հենրիետա

3. Մանասերյան Էլեն

4. Հարությունյան Հարություն

1.2 ինստիտուտի արտաբյուջեում 20 % աճ ապահովելու խնդիրն ուսումնասիրելու և արդյունավետ առաջարկների նախագիծ ներկայացնելու նպատակով կազմել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

1. Հարությունյան Արմեն

2. Հեքեքյան Էլմիաննա

3. Սարգսյան Արմեն

4. Բարսեղյան Էրիկ

1.3 ինստիտուտին կից հենակետային քոլեջ հիմնելու նպատակով ՀՀ ԿԳՆ-ի կողմից առաջարկվող շենքի հատկացման և շենքային պայմաններն ուսումնասիրելու, համապատասխան եզրակացություն ներկայացնելու նպատակով կազմել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

1. Եղիազարյան Վահան

2. Երզինկյան Աննա

3. Հեքեքյան Էլմիաննա

4. Հարությունյան Արմեն

5. Սարգսյան Արմեն

1.4 հանձնարարել ՈԻԳԱ գծով պրոռեկտոր Ն. Սարգսյանին իր գլխավորությամբ ստեղծել աշխատանքային խումբ՝ մշակելու և ներկայացնելու ինստիտուտի

մասնաճյուղերի հետագա գործունեության անհրաժեշտությունը հիմնավորող
ինստիտուտի պատճառաբանված գրավոր դիրքորոշումը,

1.5 սույն որոշման 1.1-1.4 կետերով ձևավորված աշխատանքային խմբերին
հանձնարարել աշխատանքներն ավարտել 3 շաբաթյա ժամկետում:

1.6 ԵԹԿՊԻ-ի միջազգային հարաբերությունների բաժնի աշխատանքները բարելավելու
նպատակով հանձնարարել բաժնի պետ Զ. Սահակյանին մշտական կապի մեջ լինել ՀՀ
ԿԳՆ-ում գործող համապատասխան հանձնախմբի հետ:

2. ԱՐՏՖԵՍ-ի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների ընթացքը
համարել բավարար,

2.1 հանձնարարել Է. Բարսեղյանին աշխատանքների հետագա ընթացքի մասին
պարբերաբար զեկուցել ռեկտորատին:

3. Հավանություն տալ ԵԹԿՊԻ-ի որակի ապահովման և վերահսկման մշտական
հանձնաժողովի ներքոհիշյալ կազմին`

1. Սերգեյ Կիրակոսյան
2. Անուշ Ասլիբեկյան
3. Արմինե Ավետիսյան
4. Գևորգ Եփրեմյան
5. Գրիգոր Խաչատրյան
6. Էլեն Նահապետյան
7. Թամար Հակոբյան
8. Լարիսա Ստեփանյան
9. Լիլիան Հովակիմյան
10. Ծովինար Ասատրյան
11. Կարեն Գրիգորյան
12. Հարություն Ազարյան
13. Հարություն Հարությունյան
14. Մերի Մկրտչյան
15. Նարինե Գրիգորյան
16. Վասիլ Գևորգյան
17. Տաթև Ղազարյան
18. Տաթև Մելքոնյան

19. Քնարիկ Թորոսյան

20. Քրիստինե Պողոսյան

3.1 ԵԹԿՊԻ-ի որակի ապահովման և վերահսկման մշտական հանձնաժողովի կազմը ներկայացնել ԳԽ հաստատմանը:

4. Հանձնարարել ԹՖ և ԱՊՏԿ ֆակուլտետների դեկաններ Է. Հեքեքյանին և Ա.

Հարությունյանին`

4.1 մրցութային կարգով ներկայացնել Թատերագիտություն, Ռեժիսուրա և

Դերասանական արվեստ մասնագիտությամբ սովորող ուսանողների մեկական

թեկնածություն` ս.թ. ապրիլ ամսին երկշաբաթյա ժամկետով Մոսկվայի Թատերական

արվեստի պետական ինստիտուտում դասընթացներին մասնակցելու համար,

4.2 կազմել և ներկայացնել ԵԹԿՊԻ-ի և Մոսկվայի ԹԱՊԻ-ի համագործակցության

ժամանակացույց:

4.3 Հանձնարարել առկա ուսուցման ֆակուլտետների դեկաններին առաջիկա 2 օրվա

ընթացքում ԳԽ քննարկմանը ներկայացնել 2016-2017 ուս. տարվա ԱԱՀ-ների

նախագահների թեկնածությունները:

4.4 Բակալավրի կրթական ծրագրով 2017թ. ընդունելության ծրագրերն ու գնահատման

չափանիշները հրատարակել գրքույկով` 50 օրինակ և անվճար տրամադրել

հանձնաժողովի անդամներին:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան